

դանկայտուացին եւ 3. Անաստաս հայ վանական: Ա. — Բիւզանդական Տրուսաղեմը ունեցած է մէկէ աւելի հայ բաղեր, մին՝ Սիոնի մէջ, ուր երբեմն կը բանակէր Հռովմայեցւոց լեգէոն մը, միւրը մեր Ս. Յակոբ վանքին դիմացը, եւ միւսը՝ Պրոպասիկէի Հայոց վանքին մօտ, ուր կը բնակէին նաեւ Ասորիները: Բիւզանդական շրջանին Հայոց կողմէն հիմնարկուած հայկական Պողիկէոսի վանքին աւերակներէն վերջեւ երեւան ելած գեղակեց հայերէն մոզայիք արձանագրութիւնը, ինչպէս նաեւ Չիքենեաց Լեւոն հայկական մոզայիք յիշատականքներ, որոնց արձանագրութիւնները մէջ բերած ենք մեր այս աւելաստիւրութեան մէջ, պերնախօս ապացոյցներ են քե բիւզանդական Տրուսաղեմին փառաց զենիքին վրայ գտնուած շրջանին՝ Հայերը եւս բերած են իրենց բարեպաշտական բանկագին մասնակցութիւնը Ս. Քաղաքը գեղազարդելու հայկական վանքերով, եկեղեցիներով ու մատուռներով: Այս յիշատակարանները պատահաբար երեւան ելած արձանագրութիւններ են, երբ պրպսումներ ըլլան մեզ սեպհական յայտնի աւերակներուն մէջ եւ այլուր, տարակոյս չկայ քե ուրիշ յիշատակարաններ եւս պիտի վկայեն Հայոց հին վանքերու գոյութեան:

Ներհորդ վկայութիւնը կու տայ մեզ է. դարու մասեմագիրներէն Մովսէս Կաղանկատուացի, որ կը ծանօթացնէ իր ժամանակի Աղուանից ազգի անց ու դարձերը: Անոր պատմութեան անանուն տարուանկող մը՝ Աղուանից պատմութիւնը կը բերէ մինչեւ Ժ. դար:

Կաղանկատուացին Տրուսաղեմի Ս. Տեղեաց եւ վանքերու մասին ունի յիշատակարան մը՝ որուն մէջ կը նկարագրէ Քրիստոսի Ս. Գերեզմանին, Ս. Յարութեան տանարին, Դիւս տաշի, Գողգոթայի, Ս. Սիոնի, Պիղատոսի պալատին, Համբարձման, Բերդեհեմի, Հովուանցի եւ Յորդանանու, ինչպէս նաեւ Գերսեմանիի Ս. Կուսի դամբարանին վերաբերութեամբ, յետոյ կ'աւելցնէ Տրուսաղեմի Աղուանից վանքերու նկարագրութիւնը: Յիշատակարանիս բովանդակութիւնը ականատեսի տեղեկութիւններ են, վասն զի սրբավայրերու տարածութեան մասին անոնք մանրամասնութիւններ ունին: Այս յիշատակարանը անոր համար աւելի բանկագին է, վասն զի Դ. դարու հայ ուխտաւորի գրչէն ելած է եւ հագրիս նկարագրութիւնն է Ս. Ներքին մէջ կոստանդինեան արքայապայել գլխաւոր շինութեանց. միայն քե յիշատակարանիս ինչ ինչ տղերուն մէջ ձեռնմխութիւններ կը դիտուին, կա՛մ ընդօրինակողներուն կողմէն եւ